ԱՂԱՎՆԻ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄԱԴՈՅԱՆ

Ծնվել է 30.08.1988թ.-ին Լոռու մարզի Օձուն գյուղում:

1995-2005թթ. սովորել է Հովհան Օձնեցու անվան թիվ 1 միջնակարգ դպրոցում:

2007-2012թթ. սովորել է Մոսկվայի տնտեսագիտության, վիճակագրության և ինֆորմատիկայի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում (ԲՈՒՀ-ը 10.03.2015թ.-ին միավորվել է Գ. Վ. Պլեխանովի անվան ռուսական տնտեսագիտական համալսարանի հետ):

06.10.2013թ.-ին ստացել է փաստաբանական գործունեության արտոնագիր:

28.10.2013-20.05.2014թթ. աշխատել է Փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակում՝ որպես հանրային պաշտպան:

07.01.2014-04.07.2019թթ. աշխատել է «Օրենք և իրավունք փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ-ում՝ որպես փաստաբան:

04.07.2019 թ. նշանակվել է գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազ:

Շնորհվել է 2 րդ դասի խորհրդականի դասային աստիճան:

28.07.2022թ. ՀՀ գլխավոր դատախազի 279-Ա հրամանով փոխադրվել և առ այսօր աշխատում է Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության ավագ դատախազ:

Շնորհվել է երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճան:

ՀՀ գլխավոր դատախազի 26.05.2020թ. թիվ 148-Ա հրամանով պաշտոնեական պարտականությունները գերազանց կատարելու համար արժանացել է խրախուսանքի:

30.06.2020թ. մասնակցել է Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթին և 03.07.2020թ. ընդգրկվել նշված գործառույթներն իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակում:

02.09.2020թ. ՀՀ արդարադատության ակադեմիայում ավարտել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման դասընթացը:

ՀՀ գլխավոր դատախազի 30.06.2022թ. 212-Ա հրամանով պարգևատրվել է «Իրավակարգի ամրապնդման համար» մեդալով:

ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատարի 12.07.2022թ. թիվ 237-Ա հրամանով շնորհվել է առաջին դասի խորհրդականի դասային աստիճան,

Ամուսնացած չէ:

ՄԻՇԱ ԷԼՈՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ

Ծնվել է 07.06.1992թ.-ին Շիրակի մարզի Գյումրի քաղաքում:

2008թ.-ին ավարտել է Երևան քաղաքի Վահան Տերյանի անվան թիվ 60 միջնակարգ դպրոցը:

2010-2012թթ. պարտադիր զինվորական ծառայություն է անցել ՀՀ զինված ուժերում:

2014թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի բակալավրիատը:

2017թ.-ին ավարտել է Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսահրավագիտական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2022թ.-ին գերազանցությամբ ավարտել է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

26.08.2020թ.-ին ստացել փաստաբանական գործունեության արտոնագիր:

28.08.2013-01.03.2016թթ. աշխատել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատական նիստերի քարտուղար:

01.06.2016-16.10.2017թթ. աշխատել է Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի գործավար:

16.10.2017-11.01.2019թթ. աշխատել է Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

06.02.2019-31.03.2021թթ. աշխատել է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում՝ որպես ընթացիկ իրավական աջակցման բաժնի առաջատար մասնագետ:

01.04.2021թ.-ից առ այսօր աշխատում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում՝ որպես ընթացիկ իրավական աջակցման բաժնի գլխավոր մասնագետ:

Ամուսնացած չէ:

ՌՈՒԴՈԼՖ ԱՎԱԳՅԱՆ ՍԵՐԳԵՅԻ

Ծնվել է 18.02.1994թ.-ին Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում:

2000-2010թթ. սովորել է Դիլիջան քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցում:

2010-2014թթ. սովորել է Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում:

2022թ.-ին ավարտել է Երևանի «Հայբուսակ» համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մասգիտրատուրան:

02.03.2015-22.01.2016թթ. աշխատել է Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

22.01.2016-07.04.2018թթ. աշխատել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

07.04.2018թ.-ից առ այսօր աշխատում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

ԼՈՒՍԻՆԵ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԷԴՈՒԱՐԴԻ

Ծնվել է 06.01.1988թ.-ին Շիրակի մարզի Արթիկի շրջանի Փանիկ գյուղում:

1994-2004թթ. սովորել է ՀՀ Շիրակի մարզի Փանիկի միջնակարգ դպրոցում:

2005-2009թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի Արևելագիտության ֆակուլտետի Արաբագիտության ֆակուլտետի բակալավրիատում:

2009-2012թթ. սովորել է Հյուսիսային համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում:

06.02.2017թ. ստացել է փաստաբանական գործունեության արտոնագիր (գործողությունը կասեցված է):

2018-2020թթ. սովորել է Հյուսիսային համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում:

12.10.2009-24.10.2011թթ. աշխատել է ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի գործավար:

24.10.2011-18.11.2011թթ. աշխատել է Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատական նիստերի քարտուղար:

18.11.2011-01.07.2013թթ. աշխատել է Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատական նիստերի քարտուղար:

03.06.2014-01.08.2017թթ. աշխատել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

01.08.2017-15.09.2017թթ. աշխատել է «Իրավաբան» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

16.10.2017-01.02.2018թթ. աշխատել է «Լեքսարթ փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ-ում՝ որպես տնօրեն:

15.01.2018-23.03.2018թթ. աշխատել է «ԱՐԹ ԻՆ ԱՔԱՈՒՆԹԻՆԳ» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

01.08.2018-09.08.2021թթ. աշխատել է Վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

09.08.2021-08.12.2021թթ. աշխատել է Վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի օգնական:

08.12.2021թ.-ից առ այսօր աշխատում է Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայությունում՝ որպես գլխավոր մասնագետ:

Ամուսնացած է:

ՀԱՍՄԻԿ ԱՅՎԱԶՅԱՆ ՍՏԵՓԱՆԻ

Ծնվել է 02.08.1983թ.-ին Լոռու մարզի Վանաձոր քաղաքում:

2000թ.-ին ավարտել է Վանաձորի թիվ 20 միջնակարգ դպրոցը:

2000-2004թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում, իսկ 2004-2006թթ.՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրայում:

01.06.2004-25.12.2005թթ. աշխատել է «Ֆրիգեյթ» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

31.01.2006-19.07.2006թթ. աշխատել է Վանաձորի քաղաքապետարանի գույքի կառավարման, եկամուտների հավաքագրման, առևտուրը և տրասնպորտը համակարգող բաժնում՝ որպես առաջին կարգի մասնագետ-իրավաբան:

17.07.2006-08.02.2007թթ. աշխատել է Տնտեսական դատարանում՝ որպես պարետ:

14.02.2007-01.03.2013թթ. աշխատել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական:

01.03.2013թ.-ից առ այսօր աշխատում է Վանաձորի քաղաքապետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման քաղաքացիական կացության ակտերի գրանցման Վանաձորի տարածքային բաժնում՝ որպես բաժնի պետ (10.2019թ.-ից առ այսօր գտնվում 1 երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում):

Ամուսնացած է, ունի երեք երեխա:

ԱՆՆԱ ՇԻԼԱՋՅԱՆ ՍԱՄՎԵԼԻ

Ծնվել է 02.08.1991թ.-ին Շիրակի մարզի Գյումրի քաղաքում:

2013թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2015թ.-ին՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրան:

03.11.2014-12.03.2015թթ. աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի կազմակերպաիրավական վարչությունում՝ որպես կրտսեր մասնագետ:

12.03.2015-01.06.2015թթ. աշխատել է ՀՀ արդարադատության խորհրդի աշխատակազմում՝ որպես կրտսեր մասնագետ:

01.06.2015-01.11.2018թթ. աշխատել է ՀՀ արդարադատության խորհրդի աշխատակազմում՝ որպես մասնագետ:

01.11.2018-23.03.2021թթ. աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի դատավորներին և թեկնածուներին առնչվող հարցերի վարչության դատավորների նկատմամբ վարույթներին առնչվող հարցերի բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:

23.03.2021-09.07.2021թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի դատավորներին և թեկնածուներին առնչվող հարցերի վարչության դատավորների թեկնածուներին և առաջխաղացմանը վերաբերող հարցերի բաժնում՝ որպես գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

09.07.2021-03.01.2022թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի դատավորներին և թեկնածուներին առնչվող հարցերի վարչության դատավորների նկատմամբ վարույթներին առնչվող հարցերի բաժնում՝ որպես բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար:

03.01.2022թ.-ից առ այսօր աշխատում է Դատական դեպարտամենտի դատավորներին և թեկնածուներին առնչվող հարցերի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար:

Ամուսնացած է, ունի մեկ որդի:

ՍԻՐԱՆՈՒՇ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԳԱԳԻԿԻ

Ծնվել է 02.02.1985թ.-ին, Երևան քաղաքում:

2005 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2007 թվականին՝ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2015 թվականից հանդիսանում է ՀՀ Փաստաբանների պալատի անդամ (փաստաբանական գործունեության արտոնագիրը կասեցված է):

27.03.2006-05.01.2007թթ. աշխատել է ՀՀ Առողջապահության նախարարության աշխատակազմում՝ որպես պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Արաբկիրի տարածքային կենտրոնի իրավախորհրդատու:

12.02.2008-16.06.2009թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի անձնակազմի կառավարման վարչությունում՝ որպես կրտսեր մասնագետ,

16.06.2009-10.03.2011թթ. Դատական դեպարտամենտի անձնակազմի կառավարման վարչությունում՝ որպես մասնագետ:

10.03.2011-19.12.2011թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի կազմակերպահրավական վարչությունում՝ որպես ավագ մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

19.12.2011-01.09.2021թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի անձնակազմի կառավարման վարչությունում՝ որպես ավագ մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

01.09.2021թ.-ից առ այսօր աշխատում է Դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի վերլուծության և մշտադիտարկման վարչության Դատական պրակտիկայի վերլուծության բաժնում՝ որպես գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

Ամուսնացած է, ունի մեկ երեխա:

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԶԱԴՅԱՆ ՆՈԴԱՐԻ

Ծնվել է 03.04.1982թ.-ին, ԱԽՍՀ, Կիրովաբադ (Գանձակ) քաղաքում:

1999 թվականին ավարտել է Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Անդրանիկ Օզանյանի անվան թիվ 5 միջնակարգ դպրոցը:

2005թ.-ին գերազանցությամբ ավարտել է Երևանի տնտեսաիրավագիտական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2014թ.-ին ավարտել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետի մագիստրատուրան:

01.04.2008-16.07.2008թթ. աշխատել է «Դիֆենս» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

01.10.2008-03.09.2009թթ. աշխատել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բժշկասոցիալական փորձաքննության գործակալությունում որպես գործակալության պետի խորհրդական:

21.12.2009-30.04.2010թթ. աշխատել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի ՀՀ տրանսպորտային տեսչության Արմավիրի մարզի տարածքային բաժնում՝ որպես առաջին կարգի մասնագետ:

25.11.2010-11.01.2011թթ. աշխատել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ աշխատանքի պետական տեսչության իրավական վերահսկողության բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:

10.01.2011-10.05.2016թթ. աշխատել է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմում՝ որպես ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի վճարովի հիմունքներով օգնական:

01.11.2011-01.08.2016թթ. համատեղությամբ աշխատել է Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ–ում՝ որպես ավագ իրավախորհրդատու:

01.08.2016-09.01.2020թթ. աշխատել է Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ–ում՝ որպես իրավաբանական ծառայության ղեկավար:

22.01.2014-31.01.2015թթ. համատեղությամբ աշխատել է «Տիգրան ՀՀԳ» ՍՊԸ-ում՝ որպես իրավախորհրդատու:

24.10.2014-06.02.2020թթ. աշխատել է Հակոբ Հակոբյանի անվան բարեգործական հիմնադրամում՝ որպես տնօրեն:

25.01.2021-30.12.2021թթ. աշխատել է ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակում՝ որպես հանրային պաշտպան:

30.04.2016թ.-ից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ:

02.05.2016թ.-ից մինչ օրս հանդիսանում է անհատ ձեռնարկատեր փաստաբան:

Ամուսնացած է: Ունի չորս երեխա:

ԱՆԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԱՐՄԵՆԻ

Ծնվել է 31.07.1990թ.-ին Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքում:

1997-2007թթ. սովորել է Վաղարշապատի Վ. Ռշտունու անվան թիվ 11 միջնակարգ դպրոցում:

2007-2011թթ. գերազանցությամբ սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում, իսկ 2011-2013թթ.՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրայում:

2013-2017թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտուրայում:

Հանդիսանում է իրավաբանական գիտությունների թեկնածու, ասիստենտ:

Թեկնածուական ատենախոսության թեման է «Ընդդատության հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում», մասնագիտությունը՝ ԺԲ.00.04:

04.06.2012-08.01.2013թթ. և 11.02.2013-14.11.2013թթ. աշխատել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնում՝ որպես փորձագետ:

08.01.2014-09.06.2014թթ. աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչությունում՝ որպես փորձագետ:

18.06.2014-10.06.2016թթ. աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության քաղաքացիական և վարչական գործերով պետական շահերի պաշտպանության բաժնում՝ որպես իրավախորհրդատու:

10.06.2016-22.08.2019թթ. աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետական շահերի պաշտպանության բաժնի, այնուհետև՝ վարչական գործերով պետական շահերի պաշտպանության բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ:

22.08.2019-17.09.2019թթ. աշխատել է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի իրավաբանական վարչության իրավական ակտերի բաժնի պետ-վարչության պետի տեղակալ:

18.09.2019-15.04.2022թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարության իրավական ապահովման վարչությունում՝ որպես պետի տեղակալ:

15.04.2022-05.09.2022թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարության իրավական ապահովման վարչության պետ:

05.09.2022թ.-ից առ այսօր հանդիսանում է «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի ավագ իրավաբան-փորձագետ, թիմի ղեկավար՝ քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխումների մասով:

2015թ. սեպտեմբերից առ 2017թ. հունիս աշխատել է «Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա» հիմնադրամի իրավագիտության ամբիոնում՝ որպես դասախոս:

2018թ. հոկտեմբերից առ այսօր աշխատում է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնում՝ որպես դասախոս, ասիստենտ:

2021թ. նոյեմբեր և 2022թ. մայիս ամիսներին հանդիսացել է դատավորների թեկնածուների ցուցակի քաղաքացիական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության աշխատանքների ստուգման և գնահատման հանձնաժողովի անդամ:

2021թ.-ից առ այսօր հանդիսանում է «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ, գնահատման և բողոքարկման հանձնաժողովների անդամ:

2022թ. սեպտեմբերից հանդիսանում է «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի դասախոս:

Ամուսնացած է, ունի մեկ երեխա:

Վերջին տարիների հիմնական հրապարակումներն են.

1) Միքայելյան Ա. «Քաղաքացիական գործերով ընդդատության ինստիտուտի իրավական բնույթը և էության հիմնահարցերը», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2015թ. նստաշրջանի նյութերի ժողովածու/ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբագիր՝ Գ. Ս. Ղազինյան. Եր.: ԵՊՀ հրատ., 2016, էջեր 366-384:

2) Միքայելյան Ա. «Ընդդատության կանոնների խախտմամբ քաղաքացիական գործի քննության և լուծման իրավական հետևանքները», Պետություն և իրավունք, թիվ 3 (73) 2016թ., էջեր 91-102:

3) Միքայելյան Ա. «Պայմանագրային ընդդատությունը քաղաքացիական դատավարությունում», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու/ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբագիր՝ Գ. Ս. Ղազինյան. Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջեր 457-479:

4) Միքայելյան Ա. «Բացառիկ ընդդատությունը քաղաքացիական դատավարությունում», Պետություն և իրավունք, թիվ 3-4 (81-82) Երևան 2018, էջեր 63-75:

5) Միքայելյան Ա. «Ընդդատության կանոնների խախտման հետևանքները քաղաքացիական գործի հարուցման փուլում», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու 2(2)2018/ ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբագիր՝ Գ. Ս. Ղազինյան. Եր.: ԵՊՀ հրատ., 2019, էջեր 354-369:

6) Միքայելյան Ա. «Միմյանց հետ կապված գործերի ընդդատությունը որպես տարածքային ընդդատության ինքնուրույն տեսակ», Օրինականություն, Եր., 2020, N 118, էջեր 57-66:

7) Միքայելյան Ա. «Ինտերնետ վեճերով գործերի ենթակայության առանձնահատկությունները», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու 1(3)2019/ ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբագիր՝ Գ. Ս. Ղազինյան. Եր.: ԵՊՀ հրատ., 2020, էջեր 221-245:

8) Միքայելան Ա. «Ընդդատության կանոնների խախտման դատավարական հետևանքները հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում», Արդարադատություն, Երևան, 2021, N 1 (53), էջեր 77-85: